«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ

Զարգացման ծրագիր 2019-2022թթ.

Ս. Մ. Հովհաննիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ
7. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
9. ՎԵՐՋԱԲԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բեռլին պոլիկլինիկան կառուցվել է 1989թ. Գերմանիայի «Կարմիր խաչի» կողմից, գերմանական ժողովրդի, «ԱՄԲ», Գերմանիայի Բեռլինի «Ազատ ռադիոկայանի» և Էննե Բուրդայի հանգանակություններով, որպես նվիրատվություն Գյումրիի ժողովրդին և շահագործման է հանձնվել 1993թ. դեկտեմբերի 10-ին:

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է, հանդիսանում է շահութահարկ և շահաբաժին վճարող: Կազմում է ֆինանսական հաշվետվություններ ՀՀ ընդունված ստանդարտներին համապատասխան, կարգավորվում է ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ՝ այլ իրավական փաստաթղթերով, որոնք վերագրելի են ցանկացած առևտրային կազմակերպությանը:

Պոլիկլինիկան իրականացնում է մասնագիտական կոնսուլտացիաներ և համապատասխան բուժում, բնակչության բժշկահիգիենիկ դաստիարակություն և ՀՀ Առողջապահության նախարարության կողմից արտոնագրված այլ կանխարգելիչ միջոցառումներ, մասնակցում բժշկական ստանդարտների մշակմանը, ներդրմանը և բժիշկների, միջին բուժական անձնակազմի որակավորման բարձրացմանը, հետդիպլոմային վերապատրաստմանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է առողջապահական և այլ հիմնարկների, իրավաբանական անձանց հետ:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- Առաջնային բժշկական օգնության և բուժկանխարգելիչ միջոցառումների մակարդակի բարձրացում,
- Սպասարկվող բնակչության շրջանում մահացության և հիվանդացության ցուցանիշների բարելավում,
- Սպասարկվող բնակչության հետ հետադարձ կապի ապահովում,
- Իրականացվող գործառույթների ստանդարտացում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կազմակերպության հիմնական նպատակներն են՝

- ՀՀ քաղաքացիների բուժօգնության ծառայությունների մատուցում,
- Կազմակերպության տարեկան հասույթի ավելացում միջինում 5-10%՝ պետական, ծրագրերի և վճարովի ծառայությունների հաշվին,
- Լավագույն մասնագետների ներգրավում,
- Կազմակերպության ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացում, ապահովելով ֆինանսական դրական արդյունք և շարունակական աճ,
- Մասնագիտական ներուժի զարգացում,
- Ժամանակակից սարքավորումների ձեռքբերում և ներդնում,
- Այլ բժշկական կառույցների, առողջապահության նախարարության, այլ կառույցների հետ համագործակցության զարգացում,
- Ֆինանսական կայունության ապահովում,
- Բոլոր օղակներում արդյունավետության բարձրացում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Թերապևտիկ ծառայություններ,
- Մանկաբուժական ծառայություններ,
- Մեղ մասնագիտացված բժշկական օգնություն,
- Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություններ,
- Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննություն ու բուժում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ժամանակակից պոլիկլինիկան հանդիսանում է բնակչության կյանքի որակի ու տևողության բարձրացման հիմնաքարը:

Բժշկական օգնության և ծառայությունների որակ

Բարեհամբյուր ու բարյացկամ անձնակազմ

Կանխարգելում



Բժշկական ծառայությունների հասանելիություն

Ժամանակակից բժշկական օգնության տրամադրում

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Հարմարավետ պայմաններ

Պոլիկլինիկայի զարգացման համար հիմնական ուղղություններն են.

1. Մահացության ցուցանիշի իջեցմանն ուղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակում՝ համահունչ Առողջապահության նախարարության իրականացվող առողջության առաջնային պահպանման բարեփոխումներին: Կանխարգելիչ զննումներին բնակչության ընդգրգվածության բարձրացում:
2. Իմունականխարգելման շրջանակներում բարձրացնել տրամադրվող ծառայությունների որակն ու հասանելիությունը, այդ թվում գրիպի պատվաստումների:
3. ՈՒռուցքաբանական կանխազգուշության ընդհանուր հաստատումը և սկրինինգային հետազոտությունների իրականացման ծրագրերում պոլիկլինիկայի ներգրավումը թույլ կտա ուռուցքային հիվանդությունները հայտնաբերել վաղ փուլերում և ապահովել հետագա բուժման բարձր արդյունավետությունը:
4. Դեղորայքային ապահովվածության բարձրացումը կարևոր նախապայման է պատշաճ որակի ծառայությունների մատուցման համար:

Պոլիկլինիկայում տրամադրվող ծառայությունների որակի բարելավման համար պետք է կազմակերպել ստորաբաժանումների աշխատանքների համաձայնեցում և ստանդարտացում, անձնակազմի կողմից սպասարկվող բնակչության հետ շփման ընդհանուր կանոնների ձևավորում:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը, վերապատրաստումները, բուժական, ախտորոշիչ նորագույն մեթոդների տիրապետումը հանդիսանում են առողջապահական կազմակերպության զարգացման հիմնական գրավականը, ուստի այս ուղղությամբ աշխատանքները պետք է լինեն անընդհատ:

Մատուցվող ծառայությունների սպեկտրի ընդլայնման համար վերապատրաստումների միջոցով հնարավոր է ավելի արդյունավետ օգտագործել երիտասարդ մասնագետների ներուժը: Զարգացմանը զուգընթաց նոր մասնագետների ներգրավումը թույլ կտա ապահովել նաև կադրային սերնդափոխությունը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Պոլիկլինիկան ունի բավարար հագեցվածություն իր բնականոն գործունեության համար: Նոր սարքավորումների ձեռքբերումը պետք է կատարվի բացառապես ծախսարդյունավետության հաշվարկների և ծառայությունների որակի ակնկալվող ցուցանիշների բարելավման հիման վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության հաստատուն զարգացման համար անհրաժեշտ է ֆինանսների արդյունավետ կառավարում, արդյունավետության ցուցանիշների մշակում, կիրառում, վերջիններիս պարբերական վերլուծություն: Համապատասխան գործիքակազմի օգտագործումը թույլ կտա ապահովել ընկերության անխոչընդոտ զարգացումը, այն դարձնել կանխատեսելի ու վերահսկելի:

Ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է մշտապես իրականացնել հետևյալ գործողությունները.

- մատուցվող ծառայությունների գնագոյացման մշտադիտարկում,
- մատակարարվող նյութերի, դեղորայքի, ձեռք բերված ծառայությունների ծավալների ճշգրտումներ համապատասխան մասնագետների ու պատասխանատուների հետ,
- մատակարարումների մոդելավորում, պլանավորում,
- ֆինանսական և նյութական միջոցների հաշվետվողականության հսկողություն:

ՎԵՐՋԱԲԱՆ

Առողջապահական ոլորտի կայացման գործում առաջնային բժշկական օգնության և բուժկանխարգելիչ միջոցառումների պատշաճ կազմակերպման դերը անգերագնահատելի է: Անհնար է ապահովել ցանկացած տեսակի մասնագիտացված, բարձր արդյունավետությամբ բժշկական օգնություն առանց առողջության առաջնային պահպանման գործուն օղակի: Վերջինիս զարգացումը անխուսափելիորեն հանգեցնելու է բնակչության կյանքի տևողության և որակի բարձրացմանը, ինչն ել առողջապահական համակարգի հիմնական նպատակն է: